

ՀՏԴ 82.09

Գրականություն

ԿՅԱՆՔԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ Է, ԵԹԵ ԸՆԹԵՐՑԵՍ...**Իգոր ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Բանալի բառեր. հասկացույթ, փոխաբերություն, վերլուծություն, բանաստեղծություն, ճանաչողական, ճշմարիտ, գեղեցիկ, քնարական հերոս, ողբերգություն, ստեղծագործություն

Key words: concept, metaphor, analysis, poem, cognitive, truth, beauty, lyrical hero, tragedy, work.

Ключевые слова: концепт, метафора, анализ, стихотворение, когнитивный, истина, красота, лирический герой, трагедия, произведение.

LIFE IS POEM IF YOU READ...**I. KARAPETYAN**

The review considers the collection of poems "Hope and Expectation" by Sargis Mkhitarian. In the associative-semantic field "Life is hope", the concepts "Life", "Love", "Eternity", "Beauty" are analyzed. From the point of view of the conceptual theory of metaphor, "Life is a lie", "Life is a scene", "Life is a game" metaphors are analyzed, the analysis of which aims at revealing the inner world of the poet on the verge of Truth and Beauty, Evil and Good, Life and Death and on the division of false suffering from tragedy.

ЖИЗНЬ - СТИХОТВОРЕНИЕ, ЕСЛИ ПРОЧТЕШЬ....**И. КАРАПЕТАН**

В данной рецензии рассматривается сборник стихов "Надежда и ожидание" Саргиса Мхитаряна. В ассоциативно-семантическом поле "Жизнь – это надежда" анализируются концепты "Жизнь", "Любовь", "Вечность", "Красота". С точки зрения концептуальной теории метафоры рассматриваются "Жизнь – это ложь", «Жизнь – это сцена», «Жизнь – это игра» метафоры, анализ которых направлен на выявление внутреннего мира поэта на грани Истины и Красоты, Зла и Добра, Жизни и Смерти и на разделение ложного страдания от трагедии.

Սույն գրախոսականում խոսության վերլուծության է Սարգիս Մխիթարյանի «Հույս և սպասում» բանաստեղծությունների ժողովածուն: «Կյանքը հույս է» խոսույթի իմաստային-գույճողական դաշտում վերլուծվում են «Կյանք», «Մեր», «Հավերժություն», «Գեղեցիկ» հասկացությունները: Կոնցեպտուալ փոխաբերության տեսության դիտակետում են հայտնվում «Կյանքը կեղծիք է», «Կյանքը խաբկանք է», «Կյանքը բեմ է», «Կյանքը խաղ է» փոխաբերությունները, որոնց վերլուծությունը միտված է պոետի ներաշխարհը ճշմարտի և Գեղեցիկի, Չարի և Բարու, Կյանքի և Մահվան բացահայտելուն և կեղծ տառապանքն իրական ողբերգությունից սահմանազատելուն:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաջաթաղի բազմավաստակ ընտանիքների հիմնադրամ»-ի աջակցությամբ լույս է տեսել Սարգիս Մխիթարյանի «Հույս և սպասում» բանաստեղծությունների 2-րդ ժողովածուն (Ե., Լիմուշ, 2015, 152 էջ), (առաջինը՝ «Միջօրեի ծղրիդներ» խորագրով): Ժողովածուն բաղկացած է՝ 1. Նոր դար և նոր հազարամյակ 2. Արահետ ըղձանքի ու սիրո 3. Անհետացած ոտնահետքեր 4. Օրն այսօր սաստիկ գլխացավ ունի շարքերից, որոնք շարունակում ու լրացնում են իրար:

Ընթերցումը մեծ բավականություն է պատճառում, իսկ բանաստեղծությունների վերլուծությունը և վերլուծությունը հաստատում են, որ մենք գործ ունենք խոսքի յուրահատուկ վարպետի հետ, ով իր արձակագրության մեջ մնում է չափածոյի սիրահար, միաժամանակ կարողանալով և՛ անկեղծ զարմանալ, և՛ անկեղծորեն զարմացնել: Նրա ցանկացած տող, դրանց արանքում հունցած պատկեր միանգամից հիշեցնում են իր ակունքների մասին: Նա հավատում է, որ հզոր արևը՝ մեծ լուսատուն, Արարատի կատարին ճառագելով, նոր հազարամյակի տիրույթում ու աշխարհի չորս ծագերում պիտի ազդարարի թուրքական գերությունից սուրբ Լեռան ազատագրումը: Այդ համատեքստում Արարատ լեռը հանդես է բերվում որպես նոր ժամանակների նավ, որն իր ներքին վիթխարի ուժով խախտում է տարածության և ժամանակի կեղծ ու անընդունելի պայմանականությունները և ինքնազատագրվում: Ամբողջանում է

բանաստեղծական երազանք. «Եվ շուրջն իր /լեռան-Ա. Ե./ կծաղկի ամենաթարմ ու ամենագեղեցիկ այգին աշխարհի» (էջ 6):

Այս արվեստագետը կարող է յուրահատուկ ձոներգ ստեղծել: «Միրելի Գուրգեն Մելիքյանին» բանաստեղծության մեջ «ազգամեռ գաղթ», «օդապարույր բարձունք», «տխրահառաչ անկում» նոր պատկեր-փոխաբերություններով հագեցնելով խոսքը՝ նա պակերում է մարդկային քարավանները, որ առ այսօր հարկադրաբար կամ ինքնական շարունակում են լքել իրենց տունն ու շենք: Իհարկե նրանք մերօրյա եղեռնի զոհեր են և հալածյալներ: Իսկ Արաքսի հովտից թուրքաթարական պատերազմը տեղափոխված է Կուրի հովիտ, բայց թշնամին դարձյալ նույնն է: Շարունակվող եղեռնի դեմ մաքառող հերոսը Գուրգեն Մելիքյանն է (Գուրգեն նշանակում է Գայլ, այստեղից և՛ Գայլադուռ անվանումը), որ աղվեսակերպ գորշ գայլի ատամները փշրել գիտի: Այսպես ահա. «Ու ցասկոտ հայացքով իր /Սաստում է մշթարթուն /Մեր հնամենի Կուրի հովտից /Ժանիքները սպառնագին կրճշտացնող /Գորշամուրժ աղվեսակերպ գայլին» /էջ 7/:

Ս. Մխիթարյանը ոչ միայն լավ դիմանկարիչ է, այլև՝ գեղանկարիչ: Շեքսպիրյան ճանաչողական-մտավոր դաշտից պոկած հատընտիր և անհայտ պատկերացումներ են մատուցվում բանաստեղծի կողմից: Նրա կենսափիլիսոփայությունը ծավալվում է «կյանքը հույս է» խոսույթի սահմաններում: «Կյանք», «Մեր», «Հավերժություն», «Գեղեցիկ» և այլ հասկացություններ /կոնցեպտ/ քննվում են համապատասխան փոխաբերություններով՝ արտահայտության, տեքստի, ասելիքի մակարդակներում: «Կյանքը կեղծիք է» փոխաբերությունը ընդլայնվում է «կյանքը խաբկանք է», «կյանքը բեմ է», «կյանքը խաղ է» նոր փոխաբերություններով: Նա դիմում է և՛ մարդուն, և՛ Աստծուն: Այդպիսի երկխոսությունները տանում են հոգու նոր ոլորտներ, ուր «Աստված» և «Ազատություն» հասկացությունները դառնում են առանցքային: Մյո ժամանակ էլ հստակ և տարողունակ հարցադրումներով նա վերլուծում է գոյաբանական խնդիրներ: «Կյանքը կեղծիք է» փոխաբերությունը ներկայացվում է «Կյանք և կեղծիք» բանաստեղծությամբ. «Խաբկանքի նման վզիդ փաթաթված /Կեղծիք է կյանքը. այն քեզ տրվում է /Ամենաչնչին վարձավճարով...» /էջ 8/:

Փոխաբերությունը նոր շունչ է ստանում ոչ թե երկու հասկացությունների համեմատությամբ, այլ դրանք նույն տրամաբանական, ավելի ճիշտ, ճանաչողական հարթության վրա ներկայացնելիս: Թվում է, թե բանաստեղծը հուսահատորեն հաշտվում է իրականության հետ: Բայց ո՛չ, բանաստեղծության վերջում բացահայտվում է ճշմարտությունը. «Թե սա կեղծիք է այնքան բացառիկ, /Որ էլ չի կեղծվում...» /էջ 8/: Ինչու՞: Որովհետև մարդը մեծագույն տառապանքի արդյունքում սկսում է հասկանալ, որ կեղծիքն իր մեջ է պարփակված, ինքն է դրա հեղինակը, մինչդեռ **կյանքը կեղծիք չէ**:

Այն, որ բանաստեղծը գիտնական է, դժվար չէ կռահել: Նա խոսում է մարդու **ինքնառնչացման** ախտի մասին: Ֆրոյդյան Թանատոսը (հուն. Մահի, Քնի աստ.) նրան հանգիստ չի տալիս: Կարելի է մտածել, որ Մխիթարյանը վհատվում է, երբ պնդում է, թե այդ ախտը փոխանցվում է սերնդեսերունդ: Մինչդեռ սպանողն ու սպանվողը չեն գիտակցում, որ մերօրյա աշխարհում այդ «ավերածությունը» ոչ միայն իրենց (անհատներին) է վերաբերում, այլ դա աղետ է և բնության համար: Պատահական չէ, որ հաջորդ «Ինչ-որ թմրություն» բանաստեղծության մեջ քնարական հերոսն իր հոգու անորոշությանը հակադրում է մեկ այլ հոգեվիճակ՝ վճռական ու անզիջում պայքար այդ մահացու թմրի դեմ: «Հավմետ-1», «Համլետ-2», «Դանեմարքային» բանաստեղծությունները ջնջում են ամեն տեսակի անվճռականության հետք: «Կյանք» հասկացությունը վերաիմաստավորվում է: «Կյանքը պատիժ է» փոխաբերությունը բխում է «Կյանքը իր շավղից դուրս է սայթաքել» համլետյան նկատումից: Որոշ իմաստով քնարական հերոսը համաձայնում է այդ ցավալի իրողության հետ, երբ ասում է, որ իր ուսերին էլ նետված է «Ծանրածանր մի բեռ»: «Ես դեպի ու ը պիտի շտապեի հուսակտուր /Զրափրփուրներից անվերջ կառչելով» /էջ 9/ հարցի համատեքստում խորացող բազմաճյուղ անկումների լաբիրինթոսում

ծնվում է պարողիան համլետականության զուր ջանքերի դեմ /«Համլետ -2»/: Այսպես. «Եվ մարդու հանդեպ /Տաճած հավատն ու վստահությունը /Մաշված լաթեր են, /Որով ամբոխն այս չի ուզում ծածկել /Իր մերկությունը» /Էջ 10/:

Սա ասպետականության ավարտի փաստումն է: Ամբոխի վերածված մարդկությունը խճճվել է նյութի անհաղթահարելի տիրապետության տակ, հրաժարվել պայքարի վճռականությունից: Ն. Բերդյաևի նախանշած ահռելի ճգնաժամի դեմ կա միայն մի պայքարի ձև: Դա «Դանեմարքային» ստեղծագործության մեջ հերոսի՝ իր (այդ թվում նաև այլոց) այրական պատիվը փրկելու համար մղած պայքարն է: Ուրեմն գլխավոր նպատակը մարդուն մարդկային առաքինությունները վերադարձնելն է: Համլետն այս պարագայում ապացուցում է, որ ինքը դեպի արդարության, հայրենի ժառանգության և իր պատվի փրկությանն է հակված և ոչ իշխանությանը տիրելուն:

Դժվար է ասել՝ չափածոն կարո՞ղ է էլ ավելի չափական լինել և մտքի թռիչքը՝ էլ ավելի անսասնձելի, թե՞ ոչ: Բանաստեղծը մարդուն դնում է ոչ թե ավի մեջ, այլ պարփակում է հոգու պարույրում և մի քանի վրձնահարվածով ցույց տալիս կյանքի ունայնությունը, երբ մարդ շեղվում է իր աստվածային ակունքներից: Չարի և Բարու, Կյանքի և Մահվան սահմանագծին փորձում է սահմանագատել կեղծ տառապանքն իրական ողբերգությունից. «Ասա՛ ինձ դու, եղբայր, /Որ անցար ի վերուստ քեզ տրված /Լուսահորդ սահմանը /Թագիցդ մի՞թե ավելի /Աշխարհում պաշտում են մեկ այլ բան...»/Էջ 11/:

Քնարական հերոսն ինքը կուզեր կանխել սպասվելիք դավը, բայց իզուր, ծուղակը լարված է, ձնագնդին՝ գլորված: Նրան, սակայն, հուզում է այն, որ արքա Լիրի վիճակում չհայտնվի, այլ դանեմարքայի պես փրկի մարդկային պատիվը: Տերն «Ի վերուստ» նախախնամում է այդպիսիների կյանքը, օգնում վճռական լինել, հասնել արդարության հաստատման:

«Կյանքը տառապանք է», «կյանքն ունայն է» փոխաբերություններին լրացնելու է գալիս «կյանքը շարժում է» փոխաբերությունը: Բանաստեղծն իրեն նավաբեկոր է համարում, իսկ Քրիստոսին բոլոր ժամանակների նավապետ: «Կյանքը գաղտնիք է կամ հանելուկ» փոխաբերությունը չի հուսահատեցնում բանաստեղծին, այլ մղում է ճանաչողության նոր բարձունքներ նվաճելու: «Եվ կան ճանապարհներ» ստեղծագործությունն իր թեմատիկայով նույնքան համամարդկային-համաքրիստոնեական է, որքան նախորդները: Նա փաստում է, որ կան «Սկիզբներ, որ մերը չեն /Օրեր, որ կորած են մեզ համար, /Քաղաքներ, ուր մեր ոտքը չի լինելու, Կանայք, որոնց քնքշանքը/Մեզ վրա չի անձրևի երբեք, /Դեմքեր, որ մեզ անաճանաչ կլինեն», բայց գլխավորը սա է. «Կան և կլինեն գաղտնիքներ, /Բայց մեծագույնը /Գոյավորման գաղտնիքի ճանաչումն է, /Որից անդին չկա ոչինչ...»/Էջ 23/:

Մի կարևորագույն գերխնդիր, որ բնորոշ է բոլոր դարերին:

Սարանիստին նվիրված բանաստեղծությունները պատկերների տոնահանդես են ներկայացնում: Քնարական հերոսը չի կարող չլինել երջանիկ, քանի որ իր ծննդավայրում, ինչպես ինքն է պնդում՝ «Կապույտի թներով իրիկնային մշուշն է իջնում աշխարհի վրա: Այնտեղ ամեն ինչ իմստավորվում է զարմանահրաշ իմ ծնունդով, մանուկների՝ իրենց ձյունաճերմակ մահիճներից դուրս պրծնելու աղմկահորդ ճիգերով, ու ժամանակն սկսում է ոլոր-մոլոր նավել Հարդագողի շողարձաթ ուղիներում» /Էջ 25/:

Նա նախընտրում է ճանաչել կյանքը գեղեցիկի աշխարհում, և «կյանքը շարժում է», «կյանքը արգելք է» փոխաբերություններին փոխարինելու է գալիս «կյանքը հրաշք է» փոխաբերությունը: Նա շիտակորեն հայտարարում է. «Մենք դեռ կարող ենք հրաշքներ գործել...»: Հեղինակն ապագայի հետ մեծ հույսեր է կապում: Գրքում ամեննին անտեսված չէ կարևորագույն մի բան՝ ժամանակի գործոնը, այլ խիստ արժևորված. «Վերջ հազարամյակին. /Թնջուկված ճանապարհներ, /Թնջուկված ճակատագրեր, քառս...»/Էջ 28/:

Քառսով ավարտվող հազարամյակին հաջորդող նորը ևս չի ազատվի նախորդի հիվանդություններից: «Գուցե նոր հազարամյակը, -հարցնում է բանաստեղծը: -Ո՛չ, նրան էլ անգթորեն կխճճեն միևնույն ճահճում...»: Քանզի գլոբալացող աշխարհում ևս կան «Տարերքներ՝ անկառավարելի,

/Կառավարություններ՝ անկառավարելի, /Եվ ժողովուրդներ՝ անկառավարելի....»: Աշխարհի այդ վտանգավոր ընթացքը պետք է կասեցնել: Հասնել ներդաշնակության և խաղաղության: Տիեզերական Ոգին լցված է գուրով, դեռևս ուզում է փրկել այս ամենը բնաջնջումից, կանխանշաններ է տալիս մարդուն: Այո՛, արխաիկ ժողովուրդները սարսափում էին ժամանակի վթարից, քանզի դա կարող էր վերջը լինել: Բայց եթե հների համար դա տագնապեցնող էր, ապա նորերն անհողողող են իրենց անտարբերությամբ, անհասկանալի սառնասրտությամբ: Գուցե և այդ պատճառով ժամանակը մարդկությանը պահում է անհաստատ վիճակում: Ահա, արեգակի խավարման պատկերը 1999 թ. օգոստոսի 13-ին, որը դարձել է բանաստեղծության նյութ. «Լուսնացավ հզոր Արևը՝ սկիզբը լույսի, կյանքի և վերածնությանԺամանակը կանգ առնելու չափ բովանդակագրկվեց: Այն կարծես այլևս չկար:Տիեզերքում ամեն ինչ հավասարվել էր զրոյի, որպեսզի թերևս այդ նախասկզբնական պահից սկսվեր Նոր ժամանակը» /էջ 27/: Միստիկ լռության և խորհրդավոր դադարի մեջ պարփակված է մարդկային կյանքի ու փորձի վիթխարի թաքնիմաստություն: Այո՛, այստեղ կան հարցեր, որոնք անպատասխան են, պատասխաններ, որոնք խորհելու տեղիք են տալիս:

Բանաստեղծի հուզու և մտքի թռիչքը կապվում է և սիրո գաղափարին: «Մեր» կոնցեպտը մատուցվում է «Կյանքը սեր է» փոխաբերությամբ, սերը նաև կարոտ է («Քեզնից մի թերթիկ»), կիրք է («Փղոսկրյա ոտքերով մի թխահեր պչրուհի»), հիացում-զարմանք («Աղջիկը նվագում է: Նրա մատները ծովին կախված ճայների պես վայրիվնրում են ստեղծներին»): Երբ բանաստեղծը Սիրո և Կրքի սահմանը հատում է, ծնվում է զարմանքը. «Դու թաքնվում ես, /Ու ես չգիտեմ՝ ինձանի՞ց, թե՞ քեզանից...»:

Իսկ «Քո աչքերի ավազանում» բանաստեղծության մեջ հաղթում է կրքոտ Մերը, որը ծավալվում է «երջանկաբեր հորիզոններում»: Ահա՛, կանացի երկնագույն աչեր, դրանցում փրկության ավեր որոնող պատանի, որ տարրալուծվում է թվացյալ ջրային տարերքի մեջ, խորհրդանշորեն «կործանվում»: «Քո սև աչքերը» բանաստեղծությունը մի նոր դիպվածի մասին է: Հերոսուհու «խանդոտ աչքերի խայթոցից» հերոսը հայտնվում է նրա կախարդանքի ցանցում, ու երբ փորձում է ազատվել, տղայի վրա է հորդում կանացի մագերի ջրվեժող գետը ու ջրահեղձում: Բայց հմայքների տիրուհին և «ծովակործան» հերոսը կենսապարզ ծովից դուրս են գալիս ձեռք ձեռքի տված, վճռականորեն քայլում դեպի նոր հորիզոններ, նոր կյանք: Հերոսները վերածնունդ են ապրում և արվեստի մեջ, ու պատկերը դառնում է բանաստեղծական գյուտ:

«Անբասիր առեղծվածն իր» «Անծանոթուհուն-2» բանաստեղծություններում շեշտվում են «կյանքը խաղ է», «կյանքը սեր է», «կյանքն առեղծված է» փոխաբերությունները: «Մանիքենուհին» ստեղծագործությունը հիացնում է իր ամբողջականությամբ, մտքի խորությամբ, սահուն անցումներով, մակդիրների առատությամբ: Հեղինակն այստեղ ավելի շատ բանաստեղծ է, քան բառաստեղծ, թեև բառերը նրա աշխարհում նույնքան լուսահորդ են, նույնքան «խաղացկուն», որքան աղջկա «քայլքը» և «մարմնի ճոճքը»:

Ժողովածուն լի է բանաստեղծական անակնկալներով, վերհուշերով, հայտնի մեծությունների կյանքի ու գործի նոր արժևորումներով: Նրա՝ ընկերների, մտերիմների, ազգային նվիրյալների մասին գրված ստեղծագործություններից են՝ «Հայրիկ», «Միամանթոյին», «17 հունիսի» (Պ. Սևակի հիշատակին), «Աճապարար» (Լ. Ենգիբարյանին) երկերը: Այսպես. «Այժմ բոլորս այն ձեռնածուի վիճակում ենք, /Որ դեռ հանդերձներն իր չուղղած՝ /Հայտնվել է բացվող վարագույրի «հետևում» /Եվ թաքնվելու տեղ է փնտրում: /...Խաղն սկսված է, չպետք է հապաղել, /Հարկավոր է առաջ ընթանալ, /Եթե անգամ դա արժենա մի կյանք...»/էջ 85/:

Ամեն մի բառ գրավում է քեզ «հույզի խենթությամբ»: Եվ ամենատես պոետը երևան է հանում իր՝ գեղանկարչի տաղանդը: Խուսափում է բառերի ավելորդությունից: Ամեն բառ սերվում է ոչ թե ապրումից, այլ վերապրումից: Պատկերը հաջորդում է պատկերին: Ավելին, այդ պատկերները հաջորդելով իրար՝ ոչ թե բանաստեղծի ներաշխարհից են միայն բխում, այլ նրա ներաշխարհն են ներկայացնում: Եվ եթե ուրիշները պատկերների շարք ստեղծելիս հույզը

որոշակիորեն չեն կարևորում, ապա այստեղ պատկերը և հույզը զուգադրված են, որով քնարական հերոսի հոգեկան ելևէջումներն ստեղծում են խորը զգացմունքայնության հոգեվիճակ: Լ. Աննինսկին դեռևս 1959 թ. գրում է, որ բանաստեղծություն ընթերցողը դառնում է համահեղինակ: Այս դեպքում ասես ամեն ընթերցող դառնում է Ս. Մխիթարյանի հետ համահեղինակ, նրա պես ուզում է ճանաչել աշխարհը, բացահայտել նրա գաղտնիքները գեղեցիկ և ճշմարտության օրենքների տիրույթում:

Նրա չափածոն ոչ թե արձակ է, այլ արձակն է չափածո, որտեղ ներքին հանգը, ներքին ռիթմը, դրա համաչափ տրոփյունը կարողանում են ընթերցողին տանել մի աշխարհ, որտեղ հայտնի երևույթները դառնում են խորհուրդ և խորհրդանիշ: Ժողովածուն առնչվում է մարդու հույզի ու հույսի լավատեսական ակունքներին, բայց առկա է տագնապն ինչպես մարդածին, այնպես էլ բնական աղետների դեմ: Ահա՛, Գյումրու ագարիկների երկրաշարժի պատկերը՝ իջած անսպասելի պահի տեսքով. «Մահասարսուռ շենքերը, /Ուներն այս ու այն կողմ ծռելով, /Ծնկեցին լավահառաչ կնոջ հանգույն...»: Տները շիրիմներ դարձան օրոցքների տեղում, և ընդհատված բյուրավոր ճակատագրերի վրա՝ «Ողբահառաչ թշվառությունը ցնցոտիավորվեց, ու թշվառացած /Լուսեղ կանայք և խրոխտ այրեր /Իրենց ձեռքն առան աղետյալի դատարկ ուսապարկը» /էջ 67/: Քնարական հերոսի հիշողությունից այլևս անհնար է ջնջել «փլատակների հսկա թումբերը», իսկ պահը բերում է լոկ՝ «Մահ համատարած ու ամայություն»: Աղետի զարհուրանքին հետևում է նյութական զրկանքն ու թշվառությունը: Բանաստեղծական պատկերն ընդհանրության մեջ դառնում է տիտանիզմի դրսևորում: Ցավոք, 1988-ի Մեծ երկրաշարժը ժամանակային սամանագիծը դարձավ ինչպես տնտեսական, սոցիալական, այնպես էլ հոգևոր-մշակութային ճգնաժամի, որի ծանր հետևանքների շունչն առկա է «Հույս և սպասում» ժողովածուում և թերևս հետխորհրդային այդ սերնդի մյուս արվեստագետների երկերում:

«Անհայտի հայտնագործման» մեջ հեղինակը հետևում է պլատոնյան սկզբունքին, որի դեպքում նոր աշխարհի հայտնագործումը սխրանք է հենց պոետական իմաստով: Հարազատ մնալով հայ բանաստեղծությանը՝ նա ծավալում է երկխոսություն աշխարհի մեծերի հետ՝ փորձելով հասկանալ, թե ինչպե՞ս են թնջուկվում հավերժական խնդիրները, որոնք այնուհետև հատվում են մեր ժամանակների ու արդի իրականության հետ: Կարծում եմ՝ բանաստեղծը կարողանում է իր հրաշալի ստեղծագործություններով բացահայտել անցումային ժամանակների դժվարությունները, հոգու խելահեղ վայրիվերումները, երբ մարդը հաղթահարում է պրոֆանայինի սահմանները և թափանցում մի գերերկրային Սրբազան տիրույթ: Ինչքան էլ ծանր լինեն մարմնի կաշկանդումները, շատ լինեն հոգու վայրընթաց անկումները, բանաստեղծն ապրում է Գեղեցիկի աշխարհում, և նրա բոլոր երկերի ատաղձն է կազմում «կյանքը գեղեցիկ է» փոխաբերությունը: Արվեստից հեռացած մարդիկ առօրյա հոգեսերը թոթափելուց հետո կարող են առնչվել Ս. Մխիթարյանի բանաստեղծությունների «Հույս և սպասում» ժողովածուի հետ:

ԱՐՄԵՆ ԵՐԱԶ

Տեղեկություններ հեղինակի մասին.

Իգոր Կարապետյան, մ. գ. դ., պրոֆ. ԵՊՀ, անգլերեն լեզվի ամբիոն:

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, մ. գ. դ., պրոֆ. Ի. Կարապետյանը: